Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ (XIXդ. երկրորդ կես-XXդ. առաջին կես)

XIXդ. երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում տեղի ունեցող խոշոր տնտեսական փոփոխությունները, սոցիալական-քաղաքական վայրիվերումները և հատկապես կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացման արդյունքում արդյունաբերության հսկայական աճը անդրադարձան հայոց ավանդական արհեստագործության տարբեր ճյուղերի վրա: Հիշյալ ժամանակաշրջանում անկման միտումներ էին նկատվում հայոց ավանդական տնայնագործության և արհեստների մեջ:

Անդրկովկասում գոյատևող ավանդական արհեստների և դրանց կազմակերպությունների շուրջ XIXդ. վերջին քառորդում աշխույժ քննարկում և բանավեճ սկսվեց ռուսալեզու և հայկական մամուլում: Ելնելով մեարոպոլիայի, այսինքն՝ բուն Ռուսաստանի եվրոպական մասում անընդհատ հզորացող արդյունաբերական կապիտալի շահերից և փորձելով կովկասյան շուկայից դուրս մղել տեղական ավանդական արհեստագործական արտադրանքը, Կովկասի փոխարքայության ռուսական իշխանությունները իսկական հարձակում սկսեցին նրա դեմ:

Ռուսական հետազոտողները, իրենց բացահայտ կողմնակալ հոդվածներում նսեմացնելով ավանդական արհեստների բնույթը, դրանք միտումնավոր անվանում էին՝ տնայնագործություն (*кустарные промыслы*): Եթե մինչև XIXդ. 60-70-ական թթ. ռուսական պարբերականներում և տեղեկատու վիճակագրական ժողովածուներում հիացական արտահայտություններ կային հայկական արհեստավորական կենտրոններում արտադրվող ապրանքների մասին, ապա նույն դարի վերջի և XXդ. սկզբի նույնաբնույթ աղբյուրներում բացահայտ քամահրանքով է խոսվում դրանց մասին:[1] Տխրահռչակ Ա. Պիրալովը[2] և նրա նմանները անընդհատ թմբկահարում էին կովկասյան արհեստների տնայնագործական բնույթը, փնովում արտադրանքի ցածր որակը՝ անվանելով ավանդական արհեստները իրենց դարն ապրած երևույթ: Թիֆլիսում անցկացվեց նույնիսկ հատուկ ժողով, որտեղ քննարկվեց «տնայնագործության ապագան» Կովկասում: Սևեռյուրակային-ազգայնական «Кавказ» պարբերականի էջերում բացահայտ հերյուրանքներ էին տպագրվում կովկասյան համքարությունների գործունեության մասին, իսկ համքարությունների երիտասարդ անդամներին անվանում էին ազգայնականներ ու անջատականներ: Կրքերը հատկապես բորբոքվեցին, երբ Ալեքսանդրապոլում երիտասարդ հայ արհեստավորը տպանեց ռուս սևեռյուրակային-ազգայնական քահանային, որն իր քարոզներում լուտանք էր թափում հայ եկեղեցու և ժողովրդի հասցեին:[3] Տնտեսական հալածանքները փաստորեն փոխադրվեցին բացահայտ քաղաքական հարձակումների դաշտ՝ նպատակ հետապնդելով քայքայել քաղաքային համայնքի ներքին ավանդական կառուցվածքը: Սա ստոլիպինյան քաղաքականության ուղղակի շարունակությունն էր: Գյուղական համայնքների քայքայումից հետո հերթը պետք է հասներ նաև քաղաքներին՝ հատկապես կովկասյան, որոնցում դեռևս ամուր էին ներքին ինքնակառավարման ավանդական ձևերը: Նույնիսկ բոլշևիկյան ապագա առաջնորդ Վ. Լենինն իր առաջին իսկ քիչ թե շատ վերլուծական տնտեսագիտական «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքույկում կովկասյան արհեստները նույնպես անվանում է տնայնագործություն:[4]

---

[1] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի ռուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուները որպես Ալեքսանդրապոլ քաղաքի և նրա բնակչության տնտեսական զարգացումների ուսումնասիրության աղբյուր, Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պարբերների ուսումնասիրությունը, Եր., 1985, էջ 6:*

[2] *Ա. П и р а л о в, Краткий очерк кустарных промыслов Кавказа, Тифлис, 1900.*

[3] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր, Լենինական, 1985, տետր 2:*

[4] *Վ. Լ ե ն ի ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 425:*

Անհրաժեշտ է նշել, որ XIXդ. վերջին երեսնամյակում իրականացվող տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումները ուղղակիորեն քախվում էին քաղաքային հասարակության կազմակերպման այնպիսի ավանդական կառույցների հետ, ինչպիսիք էին համքարությունները: Եթե XIXդ. առաջին կեսին նվաճված և յուրացվող Կովկասում ռուսական իշխանությունները հանդուրժողական և մինչևիսկ խրախուսական վերաբերմունք ունեին համքարությունների նկատմամբ, ապա նույն դարավերջին իրադրությունը կտրուկ փոխվեց: Հարկ է նշել, որ ռուսական իշխանությունները լռելյայն համաձայնություն էին կայացրել համքարային ավագանու հետ և քաղաքային ինքնակառավարման շատ ֆունկցիաներ հանձնել էին համքարներին:[5] Օրինակ, ինչպես XVIIIդ., այնպես էլ XIXդ. ողջ ընթացքում Թիֆլիսի համքարներն էին որոշում քաղաքագլխի ընտրության հարցը: Քանի որ համքարների մեծամասնությունը հայեր էին, ապա նախ Արևելյան Քարթլիի թագավորը, ավելի ուշ Կովկասի փոխարքան ստիպված էին այս պաշտոնում հաստատել բացառապես հայերին: Նման իրավիճակ էր տիրում նաև Երևանի նահանգի քաղաքներում և դրանցից ամենամեծում՝ Ալեքսանդրապոլում, որտեղ քաղաքային ողջ ինքնակառավարումը գտնվում էր *Էսնաֆների* ձեռքում: Պետական իշխանությունները փորձում էին չխառնվել քաղաքի հասարակության ներքին հարցերին՝ թողնելով վարչական բազմաթիվ գործառույթներ (վատորակ ապրանքի համար պատիժներ, արհեստավորների միջև ծագած վեճերի լուծում, զանցանքների քննում և այլն) էսնաֆական ավագանու տրամադրության տակ: Մինչև Պ. Ստոլիպինի նախաձեռնած հողային ռեֆորմները (1907-1910-ական թթ.) գյուղական համայնքի կառավարումը ևս իրականացվում էր ներքին ինքնակառավարման ավանդական մարմինների միջոցով, և պետությունը գործ ուներ ոչ թե որոշակի համայնքի անդամի կամ ընտանիքի հետ, այլ գյուղական ավագանու ղեկավարի՝ գյուղապետի հետ, որն ընտրվում էր համայնքի ժողովում և հաստատվում դիստանցիայի պրիստավի կողմից: Հասարակական-քաղաքական նոր պայմաններում իրերի այսպիսի դրությունը թույլ չէր տալիս իշխանության կենտրոնական մարմիններին՝ Կովկասի փոխարքայությանը, ի մասնավորի Երևանի նահանգին ոչ միայն խառնվել Ալեքսանդրապոլի ներքին ինքնակառավարման խնդիրներին, այլև կարգավորել արհեստագործական արտադրանքի իրացման և քաղաքի շուկայի վերահսկման խնդիրները:

Ռուսական գործարանային էժան ու զանգվածային արտադրանքի մուտքն Ալեքսանդրապոլի շուկա բազմաթիվ արհեստավորների աղքատացման պատճառ դարձավ, ինչը շատ լավ էին հասկանում էսնաֆական ավագանու անդամները:Նրանք բոլոր միջոցներով փորձում էին զերծ պահել քաղաքի շուկան ներմուծվող ապրանքների ճնշող հոսքից: Այս պարագայում ինքնապաշտպանության լավագույն միջոց կարող էր լինել միայն դարերով ամրագրված համապարտ երաշխավորության համակարգը, որը քաղաքային համայնքի սոցիո-նորմատիվ մշակույթի բաղկացուցիչն էր: Ալեքսանդրապոլի բնակչությունը ուղղակի և անուղղակի գրավված էր համքարությունների մեջ և ռուսական իշխանություններին հարաբերվում էր միջնորդավորված՝ համքարային վերադաս մարմինների միջոցով: Վ. Աբրահամյանի պնդմամբ Ալեքսանդրապոլի բոլոր արհեստավորներն ու առևտրականները անխտիր մտնում էին այս կամ այն համքարության մեջ:[6] Յուրաքանչյուր արհեստավոր կամ առևտրական իր շահերի պաշտպանության համար առաջին հերթին դիմում էր հիշյալ մարմիններին, այլ ոչ թե պետական իշխանությանը: Համքարային ավագանին իր հերթին փորձում էր ապահովագրել արհեստավորներին անհավասար մրցակցությունից և տարածաշրջան ներհոսող էժանագին ապրանքների ճնշումից:

Բնականաբար հայ մտավորականությունը պետք է ինչ-որ կերպ արձագանքեր իշխանությունների հարձակումներին: «Մշակ» թերթի էջերում մեկը մյուսի հետևից տպագրվեցին բավական լուրջ հետազոտական հոդվածներ՝ նվիրված հայկական

---

[5] *Գ. Ազանյան, Մեկ անգամ ևս հայ համքարությունների շուրջ, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական հինգերորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 32:*

[6] *Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII-XX դարի սկիզբը), Եր., 1971, էջ 59:*

ավանդական արհեստներին ու համքարություններին: Սրանց շարքում էին այնպիսի նշանավոր մտավորականներ, ինչպիսիք էին Կազանի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Սողոմոն Եղիազարյանցը[7] (հետագայում նա հրատարակեց մեծածավալ և արժեքավոր երկհատոր աշխատություն, որի երկրորդ մասն ամբողջովին նվիրված էր համքարություններին)[8], Խ. Մառանկոզյանը[9], Ավ. Ասլանյանը[10] և այլք: Հայ հեղինակները փորձում էին ամեն կերպ պաշտպանել ավանդական արհեստներն ու համքարային կազմակերպությունները ռուսական զանազան պարբերականների էջերում հայտնված հարձակումներից: Ս.Եղիազարյանցը, համակողմանիորեն քննելով եվրոպական համքարությունների սոցիալ-իրավական կարգավիճակը, լայն պատմահամեմատական նյութի վրա հենվելով, ներկայացնում է արևելյան և ի մասնավորի հայ համքարությունները՝ վեր հանելով վերջիններիս նմանություններն ու տարբերությունները արևմտյան նման կազմակերպություններից:

Հարկ է նշել, որ ինչպես նախախորհրդային, այնպես էլ խորհրդային պատմագրության մեջ արևելյան համքարական կազմակերպությունները անհիմն կերպով ներկայացվում էին, իբր դրանք իրենց զարգացման մակարդակով և կազմակերպվածության առումով եվրոպական ցեխերի մակարդակից շատ ցածր էին: Սա, իհարկե, արդյունք էր նյութի չիմացության, և Ս. Եղիազարյանի ռուսերեն մենագրությունը փորձ էր երևելյան համքարությունները պատշաճորեն ներկայացնել ռուսական գիտական շրջանակներին: Անվանի գիտնականը, զգալով քաղաքային հասարակության կազմակերպվածության ազգային կառույցի կարևոր սոցիալական դերակատարումը, փորձում էր ամեն կերպ հիմնավորել համքարությունների գոյության անհրաժեշտությունը և դրանց սոցիալական մեծ դերակատարումը արևելյան (իմա՝ հայ) հասարակության մեջ: Համարյա նույն դիրքերից հանդես էին գալիս նաև վերոհիշյալ հետազոտողները, որոնք նույնիսկ փորձում էին ստեղծել համքարությունների իդեալական պատկեր: Հայ հեղինակները համոզված էին, որ համքարությունների քայքայումն ու դրանց դերի նսեմացումը կհանգեցնեն ավանդական արհեստների դուրս մղմանը և արդյունքում հազարավոր արհեստավորների աղքատացմանը: Սակայն համքարությունները ստիպված էին զիջել, և դրանց քանակապես նվազեցին, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո իսպառ վերացան:

Ռուսաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության հետևանքով բազմաթիվ ավանդական արհեստներ կա՛մ վերանում էին, կա՛մ էլ սրանցով պարապողները ստիպված էին վերառրակավորվել և հարմարվել նոր պայմաններին: Երկաթուղու մուտքը Ալեքսանդրապոլ և երկաթուղային մեծ դեպոյի կառուցումը որակյալ բանվորների պահանջարկ առաջացրին, որը լուծվեց շնորհիվ տեղական երկաթագործ վարպետների: Ամենևին էլ պատահական չէր, որ հենց Ալեքսանդրապոլն ընտրվեց որպես երկաթուղային շարժակազմի և շոգեքարշերի վերանորոգման կենտրոն: Ռուսական իշխանությունները հաշվի էին առել տեղի աշխատուժի և մասնագետների կարողությունները, որոնց շատ արագ ու կարճ ժամանակում կարելի էր վերառրակավորել:

Ավելի ուշ՝ XXդ. առաջին կեսին (հատկապես խորհրդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խորհրդային իշխանությունների նախաձեռնած՝ երկրի լայնամասշտաբ ինդուստրիալացիայի տարիներին հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում մեծ չափով օգտագործվեցին տեղական վարպետների հմտություններն ու փորձը: Նախկին դարբիները, խառատները, փականագործները, ձուլագործները, ոսկերիչ-արծաթագործները, հյուսն-ատաղձագործները, կահագործները, դերձակները, կաշեգործները, օճառագործները, ներկողները և այլք կարողացան հարմարվել նոր պայմաններին:

---

[7] *Ս. Եղիազարեանց, Արհեստների ճիւղերը Կարինում XIX դարի առաջին երեք տասնամեակում, «Մշակ», 1891, N 65:*

[8] *С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч.II, Городские цехи. Организация, внутреннее управление закавказских амкарств, Казань, 1891.*

[9] *Խ. Խառանկոզյան, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, N 65:*

[10] *Ավ. Ասլանյան, Ախալցխայի համքարությունը, «Մշակ», 1891, N 6:*

Բազմաստոֆիլ զինագործները դարձան բավականին բարդ մեխանիկական տարքերի (կարի մեքենա, կաթի զտիչ, մեխանիկական կալսիչ և այլն) վերանորոգողներ: Հարակից արհեստների՝ խառատության, փականագործության, գործիքաշինության բնագավառներում ձեռք բերված հմտությունները թույլ տվեցին զինագործներին արագ «կողմնորոշվել» և հարմարվել նոր իրապայմաններին: Նրանցից քչերը շարունակեցին պարապել իրենց արհեստով:[11] Նշանավոր ոսկերիչ-արծաթագործներ Գուրգեն Տարախչյանը (Մաշտի Գուրգեն) և Մարտին Իզմիրյանը (Կոջկունեց Մարտին), օրինակ, նորաբաց տեքստիլ կոմբինատում ծաղկավոր չթի դաջվածքի նախշերն էին փորագրում:[12] Յուրհալ արտելների հիման վրա և սպանդանոցի վարպետների ուժերով ստեղծվեց Լենինականի մսի-պահածոների կոմբինատը,հոչակավոր կահագործ-վարպետների ուժերով՝ «Կարմիր նոյեմբեր» կահույքի ֆաբրիկան և այլն:[13]

Հարկ է նշել, որ բազմաթիվ արհեստավորներ՝ թիթեղագործներ, քարտաշ-որմնադիրներ, ծեփագործներ, ներկարարներ (նախշքարներ), աղցարարներ (խզարչի) և այլք շարունակեցին պարապել սեփական արհեստով և զբաղվել անհատական գործունեությամբ: Սա բխում էր հիշյալ արհեստների բնույթից, քանի որ դրանցից շատերը արհեստանոցի գոյության կարիքը չունեին կամ էլ ի սկզբանե շրջիկ արհեստներ էին: Շատ անվանի արհեստներ 1920-30-ական թթ. Լենինականում գործող բանֆակներում և ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում դարձան վարպետ-դաստիարակներ՝ իրենց հմտությունները հաղորդելով երիտասարդներին:

Համեմատության համար նշենք, որ այլ էր դրությունը գյուղերում, որտեղ հատկապես դարբնի արհեստի կարիքը զգացվում էր ընդհուպ մինչև XXդ. վերջը: Նույնիսկ մեխանիկական արհեստանոցների և ՍՏ կայաններին կից վերանորոգման ցեխերի գոյության պայմաններում բուն դարբնի աշխատանքի պահանջը մեծ էր: Գյուղական դարբինը շարունակում էր ոչ միայն պատրաստել, այլև հատկապես վերանորոգել արհեստավորական կամ գործարանային եղանակով պատրաստված գյուղատնտեսական գործիքներն ու հարմարանքները: Հայ դարբիններին մուրճի տակ հիշյալ գործիքների և մեխանիզմների զանազան մասերը կարող էին վերափոխվել՝ դառնալով միանգամայն այլ հարմարանք կամ գործիք: Օրինակ՝ Արարատյան դաշտավայրի դարբինները մեխանիկական հնձիչի մաշված սկավառակներից պատրաստում էին շատ ամուր թափչակավոր բահեր:

Գործարանային արտադրության պողպատի տարբեր համարանիշներով (մարկա) իրերը երկրորդական մշակման ժամանակ առավել բարձր որակ էին ապահովում և գյուղական դարբիններից շատերն օգտվում էին ընձեռված հնարավորությունից: Ոչ նախկին չափերով և ընդգրկմամբ, բայց և այնպես գյուղական դարբինը պահպանեց իր արհեստին բնորոշ ավանդական բազմաթիվ ֆունկցիաներ: Նույնը կարելի է ասել նաև խեցեգործության մասին: Եթե Ալեքսանդրապոլի վերջին բրուտները (չոմլակչի) արդեն XX դ. 30-40-ական թթ. այլևս չէին պարապում իրենց բուն արհեստով, ապա հարևան գյուղերում և հատկապես Սառնաղբյուրում այս արհեստով պարապողների թիվը չնվազեց: Այստեղ հատկապես զարգացած էր կանացի խեցեգործությունը և թոնրագործությունը՝ որպես շրջիկ արհեստ:[14]

Ամփոփելով կարող ենք նշել, որ չնայած հայ մտավորականների երկյուղին, ավանդական արհեստները իսպառ չվերացան, իսկ արհեստագործական բարձր ավանդույթներ ունեցող այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Ախալցխան և հատկապես Ալեքսանդրապոլ-Լենինականը, նույնիսկ խորհրդային ինդուստրալիզացիայի պայմաններում չկորցրին իրենց արհեստավորական ավանդույթների մեծ մասը: Այս-

---

[11] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, Հայկական զինագործությունը XIX դարում-XX դարի սկզբին (ըստ Կարսի և Ախալցխայի նյութերի), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 135:*

[12] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր, Լենինական, 1985, տետր 1, բանասաց Մարտին Իզմիրյանի հաղորդած նյութը:*

[13] *Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Լենինական գավառի սոցիալ-տնտեսական տարածքային կազմակերպումը 1920-40 թթ., ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ219-220:*

[14] *Կ. Բ ա զ հ յ ա ն, Շիրակի արդի խեցեգործությունը, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական վեցերորդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2004, էջ 96-97:*

տեղ մինչև XX դ. վերջերը պահպանվեցին իրենց տեսակի մեջ եզակի արհեստների բազմաթիվ ճյուղեր, որոնք դեռևս դարասկզբին վերացել էին հայկական մյուս քաղաքներում:

ВИДОИЗМЕНЕНИЯ ТРАДИЦИОННЫХ РЕМЕСЕЛ В АЛЕКСАНДРОПОЛЕ-ЛЕНИНАКАНЕ (II половина XIXв.- I половина XXв.)

___ *Резюме* ___ ___*Г. Аганян* ___

В статье обсуждаются причины и следствия видоизменений традиционных ремесел. В конце XIXв. и первой половине XXв. в Александрополе-Ленинакане произошли определенные коренные изменения, которые подействовали на всю систему экономическо-культурного развития. Под последовательным давлением российских, а потом и советских властей понесли большой ущерб традиционные занятия и ремесла Александрополя-Ленинакана. Многие традиционные ремесла или исчезли или видоизменились, а представители этих занятий перепрофировались.